# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

**30 հոկտեմբերի 2019 թվական**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

2019 թվականի հոկտեմբերի 30-ին ժամը 11:00-ին հրավիրված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու հերթական դռնբաց նիստին մասնակցելու համար մինչև ժամը 11:30-ը ավագանու տասնմեկ անդամից ներկայացել էին միայն հինգը՝ Տելեմակ Աղվանյանը, Միեր Խեչումյանը, Արսեն Ղարիբյանը, Աղաբեկ Մոսինյանը և Աբել Տիտանյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, նիստին ներկա ավագանու անդամները կազմեցին սույն արձանագրությունը ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 30-ի տասներեքերորդ հերթական նիստը չկայանալու մասին:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ

Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

Ա. ՄՈՍԻՆՅԱՆ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

*Արձանագրեց՝*
*ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի*
*աշխատակազմի քարտուղար Վ. Չավարյանը*

2019թ., հոկտեմբերի 30, ժ. 11:32
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն